

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/4**

**23 սեպտեմբերի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Մանվել Պետրոսյանի 27.08.2014 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 20.08.2014 թ-ի թիվ 219 որոշման դեմ:

**Ա/Ձ Մանվել Պետրոսյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Մանվել Պետրոսյանը տեղեկացնում է, որ 04.10.1997 թ-ին գրանցվել է ՀՀ Պետական ռեգիստրում որպես անհատ ձեռներեց և ստացել է 039238 համարի վկայականը: Ունեցել է փոքրիկ կրպակ 3,4 մ2 մակերեսով և զբաղվել է մանրածախ առևտրով: Աշխատել է մինչև 1998 թ. (ամիսը չի հիշում): Այդ ժամանակահատվածում բարեխղճորեն կատարել է իր հարկային պարտավորությունները և ժամանակին մուծել բոլոր հարկերը: Աշխատանքի ընթացքում գնորդների մեծ մասն առևտուրը կատարել են ոչ կանխիկ եղանակով, որի արդյունքում կուտակվել է պարտքերի մեծ ցուցակ: Ստիպված 1998 թ-ին Ա/Ձ Մանվել Պետրոսյանը դիմել է Աշտարակի տարածքային հարկային տեսչություն կրպակը փակելու և առևտուրը դադարեցնելու առաջարկով:

Ա/Ձ Մանվել Պետրոսյանը կարծել է, որ դրանով իր անհատ ձեռներեցի իրավունքները և պարտավորություններն ավարտվել են:

2014 թ-ի օգոստոսի 24-ին ՀՀ ՖՆ Աշտարակի տարածքային հարկային տեսչությունից ստացել է թիվ 219 որոշումը, որի համաձայն առկա է ժամանակին չկատարված հարկային պարտավորություն՝ գումարով 374 954 դրամ:

Ա/Ձ Մանվել Պետրոսյանը տեղեկացնում է, որ տեղյակ չի եղել կուտակված պարտքի մասին, ուստի խնդրում է հնարավորության դեպքում ազատել հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելուց:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Մանվել Պետրոսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 22.07.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Մանվել Պետրոսյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 374.954 դրամ, որից պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 371.422 դրամ, հաստատագրված վճարի գծով՝ 3532 դրամ: Մասնավորապես, հաստատագրված վճարների գծով պարտավորությունը առաջացել է 1998 թ-ի հուլիս և օգոստոս ամիսների համար Ա/Ձ Մանվել Պետրոսյանի կողմից հարկային տեսչություն ներկայացված հաշվարկներով, իսկ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունը՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ

կետով նախատեսված նվազագույն սոցիալական ապահովության վճարները 2009 թ-ի հունվարից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում չվճարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածների դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետի կողմից 20.08.2014 թ-ին ընդունվել է թիվ 219 որոշումը Ա/Ձ Մանվել Պետրոսյանից 374.954 դրամ գանձելու մասին:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ Ա/Ձ Մանվել Պետրոսյանի մինչև 2009 թ. նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով առկա պարտավորությունները համաձայն «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» թիվ ՀՕ-258-Ն ՀՀ օրենքի դրույթների զիջվել են՝ ընդհանուր գումարով 545.378 դրամ:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Մանվել Պետրոսյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### **ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 20.08.2014 թ-ի թիվ 219 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**